



ԼԵԶԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ, 2017 Թ.
WWW.AMLO.AM

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ: Ժյուրին գնահատում է թե պատասխանի ճշգրտությունը, թե մասնակցի տրամաբանությունը: Միայն ճիշտ պատասխանն՝ առանց բացատրության, գնահատվում է տվյալ խնդրի համար նախատեսված միավորների 25%-ով: Սա թույլ է տալիս բացառել նախնական փուլում թարգմանչական ծրագրերից և բառարաններից օգտվելու հաշվին բարձր արդյունքներ գրանցելը:

Ստորև բերված են Օլիմպիադային առաջարկվելիք խնդիրների օրինակներ՝ ըստ բարդության:

ԽՆԴԻՐ ԱՌԱՋԻՆ (20 միավոր)

Տրված են հունգարերեն գոյականներ և դրանց բոլոր հայերեն թարգմանությունները՝ անկանոն հերթականությամբ.

nyírfa, körte, almák, körtefa, nyírfák, alma, almafa

կեչի, տանձ, խնձորենի, խնձոր, կեչիներ, խնձորներ, տանձենի

Առաջադրանք. Դասավորել հունգարերեն բառերն ու դրանց հայերեն համարժեքները ճիշտ համադրությամբ:

ԼՈՒԾՈՒՄ

nyírfa – *կեչի* / **nyírfák** - *կեչիներ*

körte - *տանձ* / **körtefa** - *տանձենի*

alma – *խնձոր* / **almák** - *խնձորներ* / **almafa** - *խնձորենի*

Լուծման տրամաբանություն

Աշակերտը պետք է գտնի տրված բառերի բառակազմական առանձնահատկությունները՝ նկատելով որոշ կրկնվող ածանցներ, տվյալ դեպքում fa և k: Քանի որ կեչին, տանձենին և խնձորենին ծառեր են, ենթադրվում է, որ դրանք անվանող բառերն ունեն միմյանց նմանվող կառուցվածք: Դրանք երեքն են՝ nyírfa, körtefa և almafa: Այնուհետ պետք է ուշադրություն դարձվի, որ “խնձոր” արմատը թարգմանության մեջ կրկնվում է երեք անգամ, իսկ բնօրինակ հունագերենում երեք անգամ կրկնվում է alma արմատը: Հասկանալի է, որ alma-ն նշանակում է խնձոր, almafa՝ խնձորենի, իսկ almák՝ խնձորներ: Այստեղից բխող տրամաբանությամբ k-ն հանդիսանում է հոգնակի թվի



ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ և ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ, 2017 Թ.
WWW.AMLO.AM

վերջավորություն: Այսպիսով՝ nyírfá-ն կեչին է, nyírfák նշանակում է կեչիներ, körte-ն՝ տանձ, իսկ körtefa-ն՝ տանձենի:

ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴ (30 միավոր)

Տրված են պաայամենտու լեզվով արտահայտություններ և դրանց հայերեն թարգմանությունները

1. Mi ta atimabo	1. Ես քեզ սիրում եմ
2. Bo yiu homber tabata mira Piter	2. Զո որդին տեսավ Պիթերին
3. E ruman homber ta korda e muhé	3. Եղբայրը հիշում է նրան (իգ.)
4. Mi ruman muhé ta laba e mucha muhé	4. Իմ քույրը լողացնում է աղջկան
5. Maria tabata salbabosnan	5. Մարիան փրկում էր ձեզ
6. Bosnan lo muestra nos buki	6. Դուք ցույց կտաք մեր գիրքը

Առաջադրանք 1. Թարգմանեք հայերեն

Bo ta labanos

Piter lo mira mi yiu muhé

Maria tabata korda e buki

Առաջադրանք 2. Թարգմանեք պաայամենտու լեզվով.

Դու սիրում ես մեզ

Պիթերը սիրում էր դստերը

Տղան տեսել է ինձ

Նա (ար.) կլողացնի տղային

Մեր որդին կտեսնի գիրքը

Մենք հիշում ենք Մարիային

*Պաայամենտու լեզուն առաջացել է XVII-րդ դարի երկրորդ կեսին Նիդերլանդների պատկանող երեք Փոքր Անտիլյան կղզիների վրա (Կյուրասաո, Բոնայրե և Արուբա)՝ հնդկացիների և աֆրիկացի ստրուկների հետնորդների շրջանում և հիմնված է պորտուգալերենի և իսպաներենի հեշտացված տարբերակների վրա՝ միևնույն ժամանակ



ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ և ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ, 2017 Թ.
WWW.AMLO.AM

Կրելով անգլերենի և հոլանդերենի զգալի ազդեցություն: Պաայամենտուն ունի սեփական գիրն ու գրականությունը: Ներկայումս դրանով խոսում են մոտ 200 000 մարդ:

ԼՈՒԾՈՒՄ

Առաջադրանք 1.

*Դու լո դացնում ես մեզ
Պիթերը կտեսնի իմ դասերը
Մարիան հիշում էր գիրքը*

Առաջադրանք 2.

Bo ta atimanos

Piter tabata atima e yiu muhé

E mucha homber tabata mirami

E homber lo lava e mucha homber

Nos yui homber lo mira e buki

Nos ta korda Maria

Լուծման տրամաբանություն

Այս խնդիրը նախորդից զգալիորեն բարդ է: Աշակերտը պետք է ուշադիր կարդա, թե զուտ առաջադրանքը, թե խնդրին կից ծանոթագրությունը, որը հուշում է, որ անծանոթ լեզվի բառերում կարող են հանդիպել անգլերենից, կամ այլ լեզուներից հայտնի արմատներ: Այնուհետև պետք է ուշադրություն դարձնել քերականությանը, շարահյուսությանն ու համեմատել ժամանակաձևերը: Սա թույլ կտա առանձնացնել հետևյալ օրինաչափությունները.

Ա. Անձնական դերանունների խումբ՝ **mi** (ես), **bo** (դու), **bosnan** (դուք), **nos** (մենք), որոնք չեն փոփոխվում՝ հոլովվելիս և նաև միանում են բայական հիմքին, երբ հանդես են գալիս որպես լրացում: Այս խմբին է հարում նաև E/e անորոշ հոդը:

Բ. Երկու հատուկ բառ՝ **muhé** և **homber** համապատասխանաբար նշանակում են դրանցից առաջ դրված գոյականի սեռը, իսկ առանձին-առանձին վերցրած՝ նշանակում են համապատասխան սեռի դերանուն: (Բերված օրինակներում դա արտահայտվում է **e muhé** բառակապակցությամբ:)

Գ. Մի խումբ բառեր որոշակիորեն արտահայտում են ժամանակաձևերը՝ **tabata** (անցյալ), **ta** (ներկա), **lo** (ապառնի)



ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ և ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ, 2017 Թ.
WWW.AMLO.AM

Այսքանից հետո, հիմնվելով հայերեն թարգմանությունների վրա, դժվար չէ տարանջատել նաև գոյականների և բայերի արմատները:

Դ. **yi**u – զավակ, **ruman** – համամայր անձ, **mucha** – երեխա, **buki** - գիրք

atima – սիրելի, **mira** - տեսնել, **korda** - հիշել, **laba** - լողացնել, **salba** - փրկել, **mu**stra – ցույց տալ

Այստեղից բխող հասկացողություններն են.

Yiu homber – որդի

Yiu muhé – դուստր

Ruman homber - եղբայր

Ruman muhé - քույր

Mucha homber - տղա

Mucha muhé - աղջիկ

Այսքանը բավարար է ինդիիը ճիշտ լուծելու համար: